Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թ Ի Վ 3

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2019 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Դեկանի տարեկան հաշվետվության նախապատրաստական աշխատանքների ընթացքը:
2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
3. Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. Առաջին ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր:

Ողջունելով գիտխորհրդի նիստի անդամներին՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից նիստին մասնակցում է 19-ը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առթիվ պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ շուտով ինքը հանդես է գալու տարեկան հաշվետվությամբ, և հանձնարարեց ամբիոնների վարիչներին մի քանի օր-

վա ընթացքում գրավոր նախապատրաստել մեկ տարում կատարած գիտամանկավարժական գործունեության ամփոփ պատկերն ու ներկայացնել իրեն: Ինչպես նախորդ նիստում, այստեղ ևս դեկանը ներկայացրեց բոլոր կուրսերի ուսանողների հաճախումների պատկերը և ասաց, որ դեկանատի ու ամբիոնների վարիչների ջանքերի շնորհիվ արդեն նկատելի են դրական միտումներ:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորմանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության ամբիոնի հայցորդ **Տաթևիկ Մանուկյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյանը: Տաթևիկ Մանուկյանի ատենախոսության թեման է՝ «Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների լեզուն», ղեկավարը՝ բ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյանը: 2018-2019 թթ. ուսումնական տարում հայցորդը ուսումնասիրել է հանձնարարված գրականությունը, սկսել է շարադրել ատենախոսության առաջին գլուխը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով Տաթևիկ Մանուկյանի կատարած աշխատանքը մեկ տարվա ընթացքում՝ հաստատել ամբիոնի որոշումը և ատեստավորել նրան:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Գրետա Արսենի Գասպարյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և Վ. Սաֆարյանը:

Նշվեց, որ Գ. Գասպարյանը հայցորդ է ձևակերպվել 2017թ. հոկտեմբերին, գիտական ատենախոսության թեման է «Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը Արևելքի և Արևմուտքի գրական զուգահեռներում», գիտական ղեկավարն է բ. գ. դ., պրոֆ. Ս. Մուրադյանը:

2018 թվականի նոյեմբերից մինչև 2019 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում նա ուսումնասիրել է Արևելքի մի շարք ժողովուրդների գրականությունը, կրոնը, փիլիսոփայությունը և մշակույթը՝ գտնելու համար Իսահակյանի ստեղծագործությունների կապերը դրանց հետ: Ավարտել է Իսահակյանի՝ չինական գրականությա-

նը, փիլիոփայությանն ու իրականությանն առնչվող ստեղծագործությունների մասին հոդվածը, այժմ գրում է երկրորդ, որը վերաբերում է Իսահակյանի՝ հնդկական գրականությանն ու մշակույթին առնչվող ստեղծագործություններին:

2018 թվականի նոյեմբերին հանձնել է որակավորման քննություններ «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», իսկ դեկտեմբերին՝ «Հոգեբանություն» առարկաներից:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել Գրետա Արսենի Գասպարյանին:

ԼՍԵՑԻՆ - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Հայկ Արարատի Հովհաննիսյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և Վ. Սաֆարյանը:

Նշվեց, որ Հայկ Արարատի Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Զապել Եսայանի պատումի արվեստը», գիտական ղեկավարը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Արշավիրի Մակարյանը: Զինվորական ծառայությանը զուգահեռ՝ ասպիրանտը 2018-2019 ուստարում իրականացրել է թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման և դասակարգման աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել Հայկ Արարատի Հովհաննիսյանին:

ԼՍԵՑԻՆ - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Լևոն Օնիկի Ալոյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ Լ. Ալոյանը հայցորդ է ձևակերպվել 2018թ. հունվարին, գիտական ատենախոսության թեման է «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում», գիտական ղեկավար է նշանակվել բ. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանը:

2018–2019 ուսումնական տարում թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներին զուգընթաց՝ նա հանձնել է կրեդիտային համակարգով նախատեսված պարտադիր առարկաներից բոլոր քննությունները:

Ընթացիկ տարում ուսումնասիրել է ժամանակի պարբերական մամուլը: Մայիս ամսին հանձնել է որակավորման քննություն «Ինֆորմատիկա» առարկայից: Այժմ աշխատում է «Ծերենցի պատմավեպերը հայկական ռոմանտիզմի համապատկերում» թեմայով գիտական հոդվածի վրա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել Լևոն Օնիկի Ալոյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Աննա Վարդանի Ստեփանյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ա. Մակարյանը:

Նշվեց, որ Ա. Ստեփանյանը ասպիրանտուրա է ընդունվել 2017թ. դեկտեմբերին, ատենախոսության թեման է «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ միջնադարյան քնարերգության մեջ», գիտական ղեկավարն է բ. գ .դ., պրոֆ. Վ. Սաֆարյանը:

2017թ. դեկտեմբերի 27-ից մինչև 2019թ. նոյեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում ասպիրանտն զբաղվել է թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով: Ուսումնասիրել է հայ միջնադարյան քնարերգությունը, կարդացել բնագրերն ու ձեռագրեր:

2019 թվականի ընթացքում տպագրման է հանձնել թեմային վերաբերող երկու հոդված, որոնք առաջիկա ամիսներին տպագրվելու են ԲՈԿ-ի կողմից սահմանված պարբերականներում: Հոդվածներն ունեն հետևյալ վերտառությունները՝ «Թեմատիկ և նկարագրական ընդհանրությունները 12-14-րդ դարերի հայ և ֆրանսիական քնարերգության մեջ» և «Կյանքի ու մահվան, ազատության ու կամքի փիլիսոփայական խորհուրդը Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան…» փիլիսոփայական պոեմում»: Հոդվածները ներկայացրել է Արամ Ղանալանյանի 110-ամյակին նվիրված և Սեն Արևշատյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովների ընթացքում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն -Ատեստավորել Աննա Վարդանի Ստեփանյանին:

ԼՍԵՑԻՆ – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի առաջին տարվա հեռակա ասպիրանտ **Նռանե Բաբկենի Սարոյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դոց. Ա. Ջրբաշյանը և պրոֆ. Ժ. Քալանթարյանը:

Նշվեց, որ Նռանե Սարոյանը մասնակցել է հինգ դասընթացների, հաջողությամբ հանձնել քննությունները: Նրա ատենախոսության թեման է «Բանաստեղծական կայուն ձևերը 20-րդ դարի հայ պոեզիայում»: Ասպիրանտը հավաքել է անհրաժեշտ գրականության մեծ մասը և ուսումնասիրել եվրոպական բանաստեղծական կայուն ձևերը: Այժմ գրում է երկու հոդված՝ նվիրված 20-րդ դարասկզբի արևմտահայ սոնետին և իտալական սոնետին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել Նռանե Բաբկենի Սարոյանին:

ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Հռիփսիմե Սուրենի Սարգսյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Լ. Թելյանը և Մ. Ֆելեքյանը:

Նշվեց, որ Հռիփսիմե Սարգսյանը 2017-ին ընդունվել է հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա: Նա մասնակցել է գիտության փիլիսոփայություն, մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն), տեղեկատվական և կրթության նոր տեխնոլոգիաներ, մանկավարժություն և հոգեբանություն պարտադիր, գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում ընտրովի դասընթացներին ու ստացել համապատասխան կրեդիտներ: Տպագրության է պատրաստել մեկ հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել Հռիփսիմե Սուրենի Սարգսյանին:

ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Սարին Ագպաշ Բուզանդի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Լ. Թելյանը և Մ. Ֆելեքյանը:

Նշվեց, որ Սարին Ագպաշ Բուզանդը 2018-2019 ուստարում մասնակցել է գիտության փիլիսոփայություն, մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն), տեղե-

կատվական և կրթության նոր տեխնոլոգիաներ, մանկավարժություն և հոգեբանություն պարտադիր, գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում ընտրովի դասընթացներին ու ստացել համապատասխան կրեդիտներ: Տպագրության է պատրաստել մեկ հոդված:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել Սարին Ագպաշ Բուզանդին:

Լ Ս Ե Ց Ի Ն – Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցմա երրորդ տարվա ասպիրանտ **Լիլիթ Վաղարշակի Գասպարյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Դոց. Ս. Գրիգորյանը և պրոֆ. Վ. Գաբրիելյանը:

Նշվեց, որ Լիլիթ Գասպարյանը մասնակցել է պարտադիր և կամընտրական դասընթացների՝ հանձնելով ստուգարքները: Ատենախոսության հետ կապված՝ ուսումնասիրում է տեսական նյութեր ու արխիվներ, աշխատում է հոդվածի վրա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել Լիլիթ Վաղարշակի Գասպարյանին:

Օրակարգի **3-րդ հարցի՝** գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվության առիթով ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ դոց. Ա. Ջրբաշյանը: Նա մասնավորապես ասաց.

- Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի դասախոսները, ուսումնամանկավարժական աշխատանքից բացի, իրենց ակտիվ մասնակցությունն են բերում հանրապետության գիտական կյանքին, զեկուցումներով հանդես են գալիս համալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հաշվետու տարում ամբիոնի դասախոսները տպագրել են շուրջ 15 գիտական հոդված: Հատկապես ակտիվ է եղել նրանց մասնակցությունը Հովհ. Թումանյանի, Կոմիտասի և Լ. Շանթի 150-ամյա հոբելյանական միջոցառումներին: Մ. Ջանփոլադյանը և Վ. Նավասարդյանը այս տարվա սեպտեմբերին Մոսկվայում զեկուցումներով հանդես են եկել Թումանյանի և Կոմիտասի հոբելյաններին նվիրված «Ազգային դասական ժառանգությունը համաշխարհային գեղարվեստական համատեքստում» վերնագրով գիտաժողովում, որի նյութերը տպագրվելու են Մոսկվայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի կողմից: Ժ. Քալանթարյանը, Մ. Ջանփոլադյանը և Ա. Ջրբաշյանը զեկուցումներով հանդես են եկել Գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական

համալսարանի համատեղ գիտաժողովում՝ նվիրված Թումանյանի 150-ամյակին, նրանք նաև գործուն մասնակցություն են ցուցաբերել «Թումանյանական հանրագիտարանի» ստեղծման գործին՝ հեղինակելով ավելի քան 70 հոդված։ Քալանթարյանը հանդես է եկել նաև Առաջին հանրապետության հարյուրամյակին նվիրված «Հայաստանի Հանրապետության պատմության դասերը» գիտաժողովում. զեկուցման ծավալուն տարբերակը տպագրվել է «ՎԷմ» գիտական հանդեսում։ Ա. Ջրբաշյանը Լևոն Շանթի 150-ամյակին նվիրված գիտաժողովում հանդես է եկել «Արվեստի և իրականության փոխհարաբերության խնդիրը Լ. Շանթի տեսական աշխատություններում» զեկուցմամբ։ Ա. Սեմիրջյանը Անգլիայի Էքսետեր քաղաքում մասնակցել է Սյուրռեալիզմի հարցերին նվիրված միջազգային գիտաժողովին՝ հանդես գալով «Սյուրռեալիզմը հայ իրականության մեջ» թեմայով զեկուցմամբ։ Ա. Բեքմեզյանը հաշվետու տարում տպագրել է գիտական հոդվածների ժողովածու՝ «Սահմանային ժանրեր» վերնագրով։

ԵՊՀ հարյուրամյակի հոբելյանի առիթով ամբիոնի դասախոսներից Մ. Ջանփոլադյանը և Ա. Ջրբաշյանը պարգևատրվել են ԵՊՀ ոսկի մեդալով, Վ. Նավասարդյանը՝ արծաթի մեդալով, Ա. Բեքմեզյանը՝ ԵՊՀ արշաթե հուշադրամով։

Ամբիոնում մշտապես թարմացվում և արդիականացվում են մագիստրոսական դասընթացների ծրագրերը՝ հարմարեցնելով ժամանակակից գրականագիտության պահանջներին, մշակվում են տեսական նոր առարկաներ, կազմվում են այդ առարկաների ուղեցույցներ։

Ամբիոնի դասախոսների աշխատանքը, սակայն, չի սահմանափակվում միայն մանկավարժական և գիտական գործունեությամբ։ Պրոֆ. Ժ. Քալանթարյանը ԲՈԿ-ի՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում գործող գրականագիտության խորհրդի նախագահն է, Մ. Ջանփոլադյանը, Վ. Նավասարդյանը և Ա. Ջրբաշյանը նույն խորհրդի անդամներ են։ Ամբիոնի անդամները ասպիրանտներ և հայցորդներ են ղեկավարում ոչ միայն համալսարանում, այլև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում։

Ամբիոնի դասախոսների աշխատանքը մշտապես բարձր է գնահատվում, ուսանողների կողմից անցկացվող սոցհարցումներում։

Օրակարգի **4-րդ հարցի՝** առաջին ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփմամբ հանդես եկավ դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը։ Նա մասնավորապես ասաց, որ արդեն ամփոփվել են առաջին ընթացիկ քննությունների արդյունքները. արտառոց դեպքեր չեն գրանցվել, և ընդհանուր պատկերը հիմնականում գոհացուցիչ է։

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ